պարգևող ջուրը, բաներ, որոնք տարիներ առաջ, գոնե ինձ համար երազ էին...

Տեսա նաև փառավոր և խոշոր շենքեր՝ ինչպես նաև հին խրճիթներ և տնակներ, որոնք վերի բոլոր գեղեցկությանց դեմ արատներ են, բայց ապահով եմ, որ եթե պատերազմը չըլլար, այդ բոլորն աստիճանաբար արդեն փոփոխված կըլլային։

Տեսա հարյուրավոր ասֆալտե փողոցներ, տեսա գիշերը լուսավորված Երեվանը—Լույսի քաղաք, շնորհիվ Կառավարության հայթայթած շատ աժան էլեկտրիկ ուժին, որ ինքնին արդեն աշխարհահռչակ է։

Շատ բաներ կան ըսելիք, բայց թերևս ապագային ի վիճակի ըլլամ գրքույկի ձևով մը հրապարակ գալու, բայց կուզեմ սա ըսել, որ Հայաստանի մեջ գտնվող գիտական, գեղարվեստական մուզիկի և մարմնամարզական—մարզերու ամբողջությունը ի վիճակի է բաղդատվելու Եվրոպայի լավագույն և առաջադեմ ազգերու հետ և նույնիսկ առանց չափազանցության ըսել թե մրցումի պարագային, առաջնությունը իյնա շատ մը բաժիններու մեջ հային։

Վերջացնելե առաջ կուզեմ ըսել, որ ամեն հայ այսօր կրնա ինքզինք հպարտ զգալ ասանկ փառավոր Հայաստանի մը գոյության համար և ի սրտե շնորհավորել նեռկա Սովետ հայ կառավարությունը, որ անոր գոյությունը կարելիացուց, շնորհիվ իր մեծ աշխատանքին, շնորհիվ մեծ Սովետ Միության, մեծ ռուս ազգին և ի մասնավորի Մեծ ՍՏԱԼԻՆԻ։

Կեցցե Հայ ազգը, կեցցե Սովետ Հայաստանը, կեցցե Սովետ Միությունը, կեցցե Մեծ ՍՏԱԼԻՆԸ։

Ս. Ն. ՔՅՈՒՐՔՃՅԱՆ
Լոնդոնի հայերեն մին։

(«Վերածնունդ» հուլիս, թիվ 152—1283)

ԿԱԹՈՂԻԿՈՍԱԿԱՆ ՊԱՏՎԻՐԱԿՆԵՐՈՒ ԵՎ ԱՅՑԵԼՈՒՆԵՐՈՒ ԶԵԿՈՒՅՑԸ

ՄԻԹԻՆԿԻ ԲԱՑՈՒՄԸ

Կիրակի, հուլիս 8-ին.

Մայրաքաղաքիս սինէմա «Սքալա» հրակա սրահը հանդիսավոր տեսարան մը կպարզե։ Շուրջ 2000 հայուհիներ ու հայեր փութով եկած էին ունկնդրելու ռոմանահայ Կաթող. պատվիրակներու և իրենց ընկերակցող այցելուներու զեկույցը։ Հայաստանյան ճակատի տեղական Կոմիտեի սրահն ու բեմը զարդարած է ռոման ու սովետական դրոշակներով, Ռոմանիո, Սովետական Միության և Սովետական Հայաստանի զինանշաններով։ Բեմին վրա դեղարվեստական մեծադիր նկարները Մինա թագավորի, Լենինի, Սպարապետ Ստալինի, Սովետ. Հայաստանի նախագահ Մացակ Պապյանի և Սովետ. Հայաստանի կոմունիստ կուսակցության քարտուղար Հարությունյանի։

Ժամը 10-ին գոռ ծափահարություններ կողջունեն Սովետ. դեսպանատան ավագ—քարտուղար ընկ. Տոնկուլովի մուտքը։

Բեմ կբարձրանան ու նախագահության սեղանին շուրջ տեղ կգրավեն ընկ. Վ. Դանիելյան, Վազգեն վրդ. և ընկերներ՝ տոքտ. Տիրացյան, Ա. Սեֆերյան, Մուշեղ Մկրտչյան, Տ. Տեր-Գրիգորյան, Հ. Այվաճյան, Կ. Սագրզյան, Ա. Նազարյան, Մ. Խաչերյան, Գ. Եդիգարյան և Հ. Պապոյան—վերջին երկուքը իբր թարգմաններ։

Ընկ. Տոնկուլովը բեմ կը հրավիրվի իբր պատվո նախագահ միթինկի։

Բեմ կհրավիրվի նաև Կարմիր Բանակի գնդապետ Մկրտչյանց, ողջունելով ծափերով։

Հ. Ճ. Տեղ. Կոմիտեի նախագահ ընկ. Շ. Կյուրճյան բարի գալուստ մաղթելով պատվիրակներուն խոսքը կու տա Հ. Ճ.-ի կենտ. Կոմիտեի նախագահ ընկ. Վ. Դանիելյանի, որ կարտասանե բացման հետևյալ ճառը.—

ԸՆԿ. Վ. ԴԱՆԻԵԼՅԱՆԻ ՃԱՌԸ

Սիրելի քույրեր և եղբայրներ,

Կբերեմ ձեզի մեր սիրելի Հայաստանի կառավարիչներու և ժողովրդի սիրալիր, եղբայրական համբույրները։ Ինչպես դուք, նմանապես անոնք կարոտը կը քաշեն գաղութահայ իրենց քույրերուն և եղբայրներուն ու գրկաբաց կսպասեն ներգաղթողներուն։ Անշուշտ մենք մեծ ուրախությամբ պիտի երթանք ապրելու հոն, ուր Սովետական Միության ամեն մեկ անհատը կապրի իր երկրի հողին վրա ազատ ու երջանիկ։

Երբ հունիս 16-ի առավոտյան ժամը 5-ին բնակարանես մեկնեցա դեպի Պրնեաստ օդակայանը, 38 աստիճան տաքու-

թյուն ունեի. բարեկամներս արգելք ըլլալ կուզեին, որ չմեկնիմ հիվանդ վիճակի մեջ։ Ոչ ոք մտիկ չըրի ու մեկնեցա։

Մեր սիրելի Տոնկուլովը մեզի մեծ պատիվ ընելով եկած էր օդակայան մեզի բարի ճանապարհ մաղթելու։ Գիտնալով, որ 4 օրե ի վեր հիվանդ պառկած էի, առողջություն հարցուց։

— Հիվանդ կմեկնիմ, բայց առողջ պիտի վերադառնամ,—պատասխանեցի։

Ռումինիայի բեմի առաջնորդական փոխանորդ Վազգեն վարդապետը աշխարհիկ պատգամավորների հետ

խնդաց և իրավունք տվավ։

Գիտեի, որ պիտի երթայի մեր սիրելի Ս. Հայաստանի հողի վրա ամիս մը ապրելու, անոր օդը շնչելու և խմելու Երևանի անուշ ջուրը, մեր եղբայրներուն մոտ։

Այդպես ալ եղավ, հիվանդ մեկնեցա, առողջ վերադարձա։

Իմ և Հ. Ճ.-ի ընկերներուս վրա դրված էր բարոյական մեծ պատասխանատվություն, պետք էր որ երթայի, որպեսզի ճշգրիտ տեղեկություններ բերենք ձեզի։ Արնաք վստահ ըլլալ, որ ես ու ընկերներս ձեզի ճշգրիտ լուրեր պիտի տանք։

Ընկ. Դանիելյան ամփոփ տեղեկություններ կու տա մեր հայրենիքի վերելքի և պատերազմի ընթացքին հայ ժողովրդի հերոսական կեցվածքի մասին, թվելով հայ անվանի զորականներու անունները։ Ուշադրություն ունեի. բարեկամներս արգելք ըլլալ կուզեին, որ չմեկնիմ հիվանդ վիճակի մեջ։ Ոչ ոք մտիկ չըրի ու մեկնեցա։

Մեր սիրելի Տոնկուլովը մեզի մեծ պատիվ ընելով եկած էր օդակայան մեզի բարի ճանապարհ մաղթելու։ Գիտնալով, որ 4 օրե ի վեր հիվանդ պառկած էի, առողջություն հարցուց։

— Հիվանդ կմեկնիմ, բայց առողջ պիտի վերադառնամ,—պատասխանեցի։

Ռումինիայի բեմի առաջնորդական փոխանորդ Վազգեն վարդապետը աշխարհիկ պատգամավորների հետ

սումնական բարձր հիմնարկներու և թատրոններու նկարագրությունը ընել է վերջ, երբէ.—

«Երևանը ունի շուրջ 300 շքեղ շենքեր, որոնց մեջ աչքառու է կառավարական պալատը։ Այդ շենքի մեջ, արտաքսման պատվիրակներուն ի պատիվ, Արտաքին Գործերու նախարարը ընկ. Կարապետյան սարքեց ճաշկերույթ մը, ուր

ներկա էին մեր կառավարության բոլոր անդամները»։

Նկարագրելե վերջ գոնյաքի և գինեգործության «Արարատ» թրբսթի ընտիր արտադրությունները կեզրափակե իր հառը հետևյալ խոսքերով.

«Ուրեմն իրավունք տվեք ինձի ասելու, որ մեր Հայաստանը շատ տեսակետներով հրնա պատվով կանգնիլ նույնիսկ մեծ տերությունների կողքին»։

Որո՞ւ կպարտինք այս բոլորը, ո՞վ ազատեց հայ ժողովուրդը թշնամիներու հանկեն. ո՞վ կռվեցավ մեզի համար և անկախություն տվավ մեր հայրենիքին։ Ո՞վ կանգնած է մեր կողքին պաշտպան իր երկաթե բազուկով։

Անկասկած ռուս մեծ ժողովուրդը։ Այս բոլոր հաջողությունները արդյունքն է Լենինի-Ստալինի ազգային իմաստուն քաղաքականության։

Ապրի՛, շատ ապրի Սպարապետ ՍՏԱԼԻՆԸ, մեր մեծ հայրը։

Ապրի՛ն Ռուս մեծ ժողովուրդը և Սովետական Միության եղբայրական ժողովուրդները։

Ապրի՛ մեր Հայաստանը և իր նախագահը՝ ընկ. Պապյանը։

Ապրի՛ Ռոմանիո Միհա թագավորը և ռոման ժողովուրդը։

Որոտալից ծափեր կընդհատեն վերջին խոսքերը։

***

ԱՌԱՋՆՈՐԴԱԿԱՆ ՓՈԽԱՆՈՐԴ ՎԱՋԳԵՆ ՎԱՐԴԱՊԵՏԻ ՃԱՌԸ

Սիրելի՛ հայրենակիցներ,

Ճշմարիտ է, ոչ երազ է և ոչ ալ պատրանք, Հայաստանեն կուգանք։ Տեսանք մեր մայր հայրենիքը, տեսանք Մասիսն ու Արագածը, տեսանք մեր երկնքի կապույտը, խմեցինք մեր երկրի ջուրը և ոսկեվազդինին, տեսանք Երեվանը և վարդագույն քարե շինված կառավարության շենքը, ուր ժողովրդի վարդագույն ապագան կհյուսվի, տեսանք մանավանդ մեր հարազատ ժողովուրդը, մեր ազնիվ, աշխատող, ստեղծագործող մեր հերոս ժողովուրդը, որ մեզ գրկաբաց. և սրտաբաց ընդունեց անհուն կարոտով և սիրով տոգորված։

Բայց իմ զգացումներուն ընթացքը պետք է կեցնեմ ու ձեզի խոսիմ ամփոփ կերպով Ս. Էջմիածնի և մեր Նորընտիր Հայրապետի մասին։

Ս. Էջմիածինը և մեր եկեղեցվո Մայր Աթոռը այսօր կը վերածնին և վերաշինվող հայրենիքի մը կողքին կունենանք ահա նաև վերաշինվող եկեղեցի մը։

Գաղութահայ հավատացյալ ժողովուրդը կրնա ուրախությենեն ցնծալ, որովհետև մեր եկեղեցին, Ս. Էջմիածինը այսօր հեղինակություններ են հարգված և սիրված հաստատություններ ոչ միայն հայ ժողովուրդի կողմեն, այլ նաև հայ պետության և Սովետ. վերին իշխանության կողմեն։

Այս բոլորը սակայն կը պարտինք մեր նորընտիր Հայրապետին Գեվորգ Զ. Կաթողիկոսին, անոր վայելած հեղինակության, անոր տարած աշխատանքին, անոր հավատարմության հանդեպ մեծ և ազնիվ ռուս ժողովրդին, անոր նվիրումին հանդեպ սովետական իշխանության։

Մեր Հայրապետը այն իմաստուն և հեռատես եկեղեցականը եղավ, որ տեսավ թե Հայ ժողովրդի փրկությունը ռուս ժողովուրդի և Սովետական իշխանության հաշթանակին մեջն է։

Եվ ահա այս մեծ հայրենասերը այսօր իր կեցվածքին ու աշխատանքին պտուղը կքաղե և որով կշահին նաև մեր եկեղեցին և մեր ժողովուրդը։

Այսօր Գեվորգ Զ Կաթողիկոսը շահած է սիրտը այն մեծ ղեկավարին, որ Ստալինն է։

Ապրիլ 19-ին Սպարապետ ՍՏԱԼԻՆԸ ընդունեց մեր Հայրապետը, որ իրեն ներկայացուց հուշագիր մը։

Կեներալիսիմ ՍՏԱԼԻՆԸ լսելով Նրա խնդրանքները ըսած է «Այս խնդիրները վաղուց կարգադրված ըլլալու էին և իր ձեռքով խնդրագրի վրա մակագրած է «Համաձայն եմ»։

Վեհափառը ցուցնելով մեզի պատմական այս թուղթը ըսավ.— «Ահա մեր եկեղեցվո հիմնաքարը, որուն վրա պիտի կառուցանենք մեր նոր կյանքը, իսկ Մեծ Ստալինի անունը հավիտյան պիտի մնա հաղարամյա Ս. Էջմիածնի մեջ»։

***

ԸՆԿ. Ա. ՍԵՖԵՐՅԱՆԻ ԽՈՍՔԸ

Հայրենակիցներ,

Վստահ եմ, որ սրտի անհուն բերկրանքով մտիկ պիտի ընեք իմ սրտառանց խոսքերը, որոնք ցույց պիտի տան, թե ի՞նչ զգացի մեր մայր հայրենիքին մեջ։

Նախքան տեսածներս պատմել ձեր բոլորիդ ներկայությամբ հրապարակավ խորին շնորհակալություն կը հայտնեմ ընկեր

Տոնկուլովին, որուն ջանքերուն շնորհիվ ես ալ իրավունք ստացա մեկնելու մեր բոլորին սիրելի հայրենի մայրաքաղաքը՝ Երեվան։

Մեզի եղած ընդունելության ձևի մասին միայն սա ըսեմ, որ մեր սիրելի եղբայրներն ու քույրերը այնչափ գրկաբաց և անկեղծ ընդունեցին մեզ, որ բնավ չէինք կրնար երևակայել, նույնը նաև Հայաստանի ժողովուրդը իր մտքեն չէր ասցուցած մեր միջոցավ զգալ գաղթականության սերը դեպի մայր հայրենիքը։

Առաջին առթիվ այցելեցինք կառավարական շենքը, որ իր մեծությամբ և շքեղությամբ կը գերազանցե շատերու տեսածները. հոն նստող պաշտոնյաներ գիշեր ու ցորեկ անդադար կաշխատեին երկրի և ժողովուրդի բարիքին համար։ Անկե կանցնինք օպերայի շենքը, որուն գեղեցկության ի տես մեզի հետ եկող պատգամավորներեն շատեր ապշեցան, պատմելով, որ այս կարգի օպերա մը շատ քիչ կը գտնվի Եվրոպայի զանազան քաղաքներու մեջ։ Եթե երբեք յուրաքանչյուր հիմնարկության մասին զատ պատմել հարկ ըլլար, օրեր պէտք են, որ կարենամ տեսածներս պատմել։

Ահա սիրելի հայրենակիցներ, այս ահռելի գործը կը պարտինք Սովետական իշխանության և ռուս մեծ ժողովուրդին եղբայրական աջակցության, որմեն օգտվելով հայ ժողովուրդը իր շինարար ընդունակությամբ այսքան կարճ ժամանակվա ընթացքին մի քանի անգամ մեծցուց Երեվան քաղաքը։

Իսկ ամենակարևորը այն զգացումն է, զոր մեր ժողովուրդը ցույց տվավ գաղութահայ հյուրերուն հանդեպ, դասակարգային խտրություն չդնելով, ըլլա հարուստ կամ բարեկեցիկ, միայն թե լինի մաքուր հայ, որուն համար Մայր Հայրենիքի դռները միշտ բաց են, որ երթա իր բաժինը բերե երկրի շինարարական գործին։

Այսպես, սիրելի հայրենակիցներ, մեր բոլորիս պարտականությունն է, որ ամեն մեկ հայ իր ուժի ներածին չափով օգտակար ըլլա, ղրկելով հոն այն ամենը, ինչ որ կարիք կը զգա մեր հայրենիքը։

Մի՛ մոռնաք, որ 4 տարվա պատերազմը, ինչպես ամբողջ աշխարհի, նույնը նաև իր ազդեցությունը ձգած է մեր հայրենիքի վրա, շատ մը շենքեր կիսատ ձգված էին, որոնք ներկայիս լրացնելու և նորեր շինելու կը ձեռնարկեն, վստահ ըլլալով որ շատ կարճ տարիներու ընթացքին այնքան պիտի զարգանա մեր հայրենիքը, որ շատերուն համար անճանաչելի դառնա։

Վերջացնելով խոսքս կսեմ կեցցե Սովետ Միությունը և անոր մասը՝ Սովետ Հայաստանը, կեցցե շինարար հայ ժողովուրդը և կեցցե մեզ հյուրընկալող ռումին ազնիվ ժողովուրդը։

***

ԸՆԿԵՐ Տ. ՏԵՐ-ԳՐԻԳՈՐՅԱՆԻ ԶԵԿՈՒՅՑԸ

Իբր Ռումանահայ Երիտասարդության ներկայացուցիչը ինձ մասնավորապես հետաքրքրեց մեր հայրենիքի երիտասարդ սերունդը։

Հայաստանի նյութական առաջադիմությունը, սոցիալիստական շինարարությունը, սովետական վարչաձևը ծանոթ էին ինծի ինչպես ամեն հայասեր հայու համար։ Մեր այցելության առթիվ համոզվեցա որ ստացված տեղեկությունները ճշգրիտ էին, բայց ոչ լրիվ, քանի որ բազմաթիվ նոր շինարարություններ մեզի համար անծանոթ մնացեր էին։ Ինչ որ սակայն ավելի կհետաքրքրեր, այն ալ երիտասարդության դաստիարակությունը, կազմակերպությունը և հոգին էր։ Ոչ մեկ երկրի մեջ այնքան շատ կարևորություն կտրվի երիտասարդության, որքան Սովետ Միության մեջ և Սովետ. Պետության գուրգուրանքը երիտասարդներու հանդեպ անսահման է։ Այս բոլորը ձեզ ծանոթ է անշուշտ, բայց ինչ որ անծանոթ կմնար, այն ալ դաստիարակության արդյունքները և պետական հոգատարության հետևանքներն էին։

Կխոստովանիմ, որ առաջին խոսք հանդիպումս դպրոցական և համալսարանական երիտասարդության հետ վրաս խոր տպավորություն մը ձգեց։ Ինչ որ ավելի ուրախալի է, այն ալ տաղանդավոր երիտասարդության մեծ թիվն է։ Այսպես, առաջին հերթին այցելեցինք Կրուպսքայի անվան աղջիկներու տասնամյա դպրոցը։ Դասուցչանոցի մեջ փոքր հանդիսություն մը ընթացքին եկույթ ունեցան քանի մը շրջանավարտուհիներ, հայկական բանաստեղծություններով և բոլորն ալ թատերական մեծ տաղանդ ի հայտ բերին մանավանդ մին Դոնարա Խաչատրյանը, երբ արտասանեց Ա. Իսահակյանեն, այնքան հուզեց լսողները, որ ի վերջո բոլոր հյուրերու և դպրոցի ուսուցչուհիներու աչքերը արցունքով լցվեցան։ Ծանոթացա նույնպես երկու 15 տարեկան պատանիներու

հետ, որոնք հետս Չեքսպիրյանն դարձուածքներով կը խոսեին և Համլեթեն ամբողջ հատվածներ կարող էին գոց արտասանել։ Հանդիպեցա երիտասարդ ուսանող, ուսանողուհիներու, որոնք հիմնակաէորէն ուսումնասիրած էին արևելահայ և արևմտահայ գրականությունը, ռուս գրականությունը և ոչ նվազ ծանոթություններ ունեին արևմտյան Եվրոպայի գրականութենեն. կճանչնային Հովհ. Թումանյանը, Բաֆֆին, Պետրոս Դուրյանը, Պարոնյանը, ինչպես և Պուշկինը և Տոլստոյը, Չեքսպիրը և Շիլերը։ Բայց երիտասարդության միայն գիտությունը և տաղանդը չէ, որ հարգանք կպատճառե, այլ և նկարագիրը ու անոր անկեղծությունը, լրջությունը, խորությունը, ազնվությունը, ընտիր կրթությունը, ու շափազանցած չեմ ըլլար, եթե հայտարարեմ, որ մեր հայրենիքի երիտասարդությունը գերազանց է արևմտյան Եվրոպայի առաջացյալ ազգերու երիտասարդությունը։

Այս եզրակացության հասնելե վերջ աշխատեցա լուսաբանել ինձ համար այս սքանչելի արդյունքին պատճառները։ Պրոտեցա մանկամսուրները, մանկապարտեզները, ուսումնասիրեցի պիոներական կազմակերպությունը, կոմերիտմիությունը, համալսարանները, ուսանողական կյանքն։ և իմ մեջ այն համոզումը գոյացավ, որ հայ երիտասարդության այս աննախընթաց առաջադիմությունը կպարտինք մասնավորապես սովետական կառավարության և համայնավար կուսակցության ջանքերուն։ Հանրապետության պյուճեի 70 առհարյուրը հատկացված է ժողովրդի լուսավորության։ Հայաստանը ունի ներկայիս 11 բարձրագույն դպրոցներ 10 հազար ուսանողներով և 1134 ալ դպրոցներ 240 հազար աշակերտներով, միայն Երևանի մեջ ունինք 40 տասնամյա դպրոցներ, այսինքն նախակրթական և լիսէ միասին։

Միջնակարգ և բարձրագույն դպրոցներու դասագրքերը ամբողջովին հայերեն են և ամեն մի առարկայի վերաբերյալ մասնագիտական բառերը նույնպես հայացուցած են։ Ներկա եղա միջնակարգ դպրոցի, տրնտեսագիտական և բիոլոգիական ֆաքուլթեթներու, Կպոլիտեխնիկի դասընթացներու և քննություններու, հակառակ որ կարգ մը նյութեր ծանոթ էին ինձ, չէի կրնար հետևիլ բացատրություններուն, որովհետև նոր հայերեն բառերը բոլորովին անհասկանալի կմնային ինծի։

Կան զանազան միջնակարգ դպրոցներ. ամենեն տարածվածը տեսական տասնամյա դպրոցն է, ուր երեխաները կստանան ընդհանուր կրթություն, բայց կրնան իրենց սիրած առարկաներով ավելի զբաղվիլ ցերեկե վերջերը. այսպես կը կազմվին գրական շրջանակներ, մաթեմատիկայի, ֆիզիկո-քիմիայի, գեղարվեստի, մարզանքի շրջանակներ։

Մեծ հետաքրքրություն պատճառեցին երաժշտական դպրոցները նույնպես տասնամյա։

Այս տիպի դպրոցները ավարտողները կհետևին, սովորաբար կոնսերվատորիան 5 տարի— ուրեմն ընդամենը 15 տարի երաժշտական կրթություն կստանան, դառնալով իսկական արվեստագետներ, առիթունեցանք գնահատելու այս դպրոցներու ձեռք բերած արդյունքները, հայկական ֆիլհարմոնիայի դահլիճին մեջ բերած արդյունքները, հայկական ֆիլհարմոնիայի դահլիճին մեջ կազմակերպված համերգի մը ընթացքին փոքրիկ երեխաներ նվագեցին դասական կտորներ, հասուն երաժշտագետներու շարժվածքով և հմտությամբ։

Բացի այս մասնագիտական դպրոցներեն կան նաև ուրիշ միջին աստիճանի դպրոցներ, տեխնիկումներ, որոնք կպատրաստեն տեխնիկական մասնագետներ, ինչպես՝ շինարար, ճարտարապետ, տեքսթիլիստ, բժշկական տեխնիկներ, դասընթացը կտևե 4 տարի, իսկ ընդունվելու համար անհրաժեշտ է ունենալ գոնե 7 դասարանի վկայական, տեխնիկումներու ավարտողները կարող են շարունակել իրենց մասնագիտությունը բարձրագույն հաստատություններու մեջ։

Ուսանողությունը կառավարության և ժողովրդի մասնավոր գուրգուրանքին կարժանանա, ամեն ուսանող կստանա ամսաթոշակ, դուրսեն եկող ուսանողները կապրին հատուկ հանրակացարաններու մեջ՝ առանց ոչ մեկ վարձի։ Ուսանողները կը ճաշեն հատուկ ճաշարաններ չնչին ծախսով մը՝ ամսական մոտավորապես 60 ռուբլի։

Ուսանողությունը կկազմե հանրապետության ամենալավ դաստիարակված ուժերը։ Ուսանողները հավատարիմ սովետ հպատակներ են և լավ հայեր, հայ շունչը, հայ հոգին կը տիրապետե ամենուրեք։

Դպրոցական դաստիարակության զուգընթաց կզարգանա նաև պիոներական դաստիարակությունը, 7 տարեկանեն սկսյալ բոլոր երեխաները կհամարվեն պիոներներ։

Պիոներական կազմակերպությունը կօժանդակե դպրոցին, կը պատրաստե ապա-

գա մասնագետները և սովետ քաղաքացիները։

Հայաստանի ամենալավ կազմակերպված հաստատություններու մին մարմնակրթությունն է։ Ներկա եղանք ֆիզկուլտուրայի տան մեջ մարզական հանդեսի մը. տասնյակ աղջիկներ և տղաներ կատարեցին ամենադժվարին ռիթմիական մարզական շարժումներ. Հայաստանի մարզիկները բարձր գնահատանքի արժանացած են և կգրավեն ամբողջ Սովետ Միության մեջ երկրորդ տեղը, Մոսկվայեն վերջ։ Բազմաթիվ մարզական քլուպներ գոյություն ունեն, ինչպես՝ Սպարտակը, Դինամոն և այլն։

Ֆիզկուլտուրնիկներու կեցվածքը և կարգապահությունը արժանի է հիացումի. ներկա էինք Երևան—Խարկով ֆուդբոլի մրցումին։

Ընդհանուր առմամբ պետք է ըսել, որ այնտեղ երիտասարդությունը շատ ավելի լուրջ է։

Հայաստանի երիտասարդությունը պետք է ըլլա մեր վառ օրինակը։ Լույսը կու գա Արևելքեն նաև երիտասարդության համար։

***

ԸՆԿ. Հ. ԱՅՎԱՃՅԱՆԻ ՈՒՂԵՐՁԸ

Սիրելի՛ ընկերներ և ընկերուհիներ.

Ս. Հայաստանի բանվորներու և բանվորուհիներու կողմե ձեզ բերած եմ ջերմ ողջույններ։

Սիրելի՛ ընկերներ, մեր տպավորությունները մանրամասն ձեզ բացատրել, անշուշտ, օրերու և ժամերու կկարոտի ուստի այդ կթողում ընկ. Տիրացյանին, որ մանրամասն ձեզ գոհացնե իր գրչով ու բանախոսություններով։ Ես միայն կրնամ ձեզ հայտնել, որ Ս. Հայաստանի բանվորն ու բանվորուհին և կոլխոզնիկները բոլորն ալ ուրախ են և իրենց հ-գեկան տրամադրությունը շատ բարձր է։ Թե ինչո՞ւ ուրախ են. ուրախ են, որովհետև կկատարեն իրենց պարտականությունը հանդեպ իրենց հայրենիքին, այս 4 տարվա հսկա պատերազմի ընթացքին։

Անոնք ուրախ են, որովհետև իրենց հարվածային աշխատանքի, իրենց խնայողության, իրենց քրտնիքի և Կարմիր Բանակի զոհաբերություններուն վարձատրությունը ստացած կհամարեն ֆաշիզմի ջախջախումով։

Ուրախ է հայ բանվորը, որովհետև իր քրտինքը թափեց, այս շորս տարվա ընթացքին իր արդյունքը տվավ։

Անոնք ուրախ են, որովհետև այն ճիգը, որ կթափեր ֆաշիզմը ջախջախելու համար, այսօր ընդհակառակը այդ աշխատանքը կթափե մեր երկրի վերաշինության և առաջադիմության համար։

Սիրելի՛ ընկերներ, մեկ երկու օրինակ տամ մեր բանվորա-գյուղացիության հարվածային աշխատանքի մասին, որուն մեջ մեծ դեր կատարած է հայ կինը։ Ինչպես գիտեք, ամեն պատերազմի ժամանակ ամեն մեկ պատերազմիկ երկրի արդյունաբերությունը կպակասի, մինչդեռ այս պատերազմի ընթացքին, շնորհիվ մեր բանվորա-գյուղացիության հարվածային աշխատանքին, պարծանքով կրնանք հայտարարել հարյուր քսան տոկոսով ավելացած է։ Եվ ան այդ կհայտարարե սրտի բոլոր գոհունակությամբ իր պարտքը կատարած ըլլալուն համար։

Ան առաջ տարած է այս պատերազմի ընթացքին որոշ չափով նաև շինարարություն, ինչպես որ ավարտած է պետական մեծ պալատը, Լենինի հրապարակին վրա, ան սկսած է Դվինի կոլխոզներու թատրոնի շենքը և ավարտած է դեռ ուրիշներ, որոնք մենք առիթ չունեցանք տեսնելու։

Անոնք ուրախ են, որովհետև իրագործած են Ս. Միության Մեծն Առաջնորդ Սպարապետ ՍՏԱԼԻՆԻ և Ս. Հայաստանի Առաջնորդ Հարությունյանի սա նշանաբանը՝ «Ամեն ինչ ճակատի համար և ամեն ինչ հաղթանակի համար» և ան տված է յուր քրտինքը, յուր արյունը, յուր խնայողությունը և ամեն ինչ, և ատոր համար ալ ան հաջողած է և ջախջախած Հիթլեր իժին գլուխը։

Սիրելի՛ ընկերներ, Ս. Հայաստանի բանվորն ու բանվորուհին մեկ բաղձանք ևս ունի, այդ է՝ արտասահմանի հայությունը տեսնել վերադարձած յուր սիրելի Ս. Հայրենիքը և ատոր կսպասե ան գրկաբաց։

Ուստի բոլոր սրտով գոչենք՝ կեցցե Ս. Միության և Ս. Հայաստանի բանվորն ու բանվորուհին, որոնք ամեն ջանք թափեցին, որպեսզի հաղթեն ֆաշիզմին և ազատագրեն ամբողջ մարդկությունը։

***

Ընկ. Շահեն Կյուրճյան կը կարդա Ս. Հայաստան մեկնող այցելու ընկերներին Մուշեղ Մկրտչյանի օրատետրին մեջ երկու

ուսանողներու կողմե վերջին տոպեին գրված հետևյալ ողջույնի խոսքերը.—

Ողջույն Ձեզ, մեր թանկագին հայրենակիցներ.

«Մենք հայ ժողովրդի հարազատ զավակներս, Հայաստանի ծաղկածիծաղ բնության մեջ մեծացած երջանիկ աղջիկներս ցանկանում ենք, երազում ենք դառնալ դերասանուհիներ, որպեսզի ավելի և ավելի վեր բարձրացնենք և զարգացնենք հայ ժողովրդի կուլտուրան և արվեստը։

«Մենք ցանկանում ենք ճուտ և հաջողությամբ ավարտել դպրոցը և ամբողջովին նվիրվել մեր սիրած ու փայփայած գործին, արվեստին։ Մենք մեր անմահ խաղով ցույց կտանք դարերով տանջված արյունակից և այլազգի ոսոխներից հալածված հայ ժողովրդի դարավոր վիշտը, կրկանքները և երբեմնի փառահեղ կյանքը։

«Մենք ցանկանում ենք Ձեզ, մեր սիրելի և թանկագին քույրե՛ր և եղբայրնե՛ր, մեր պանդուխտ հայրենակիցնե՛ր, վերադարձ ձեր հայրենիք Հայաստանը, Սովետական Հայաստանը։

«Ձեզ հետ միասին մենք ավելի և ավելի վեր կբարձրացնենք մեր պանծալի հայրենիքի՝ Հայաստանի կուլտուրան և արվեստը։ Մենք, 15 տարեկան աղջիկներս էլ ապագա մեր պարտքը պիտի կատարենք հանդեպ մեր սիրելի հայրենիքին, դառնալով դերասանուհիներ։ Մենք կկերտենք անմահ կերպարներ, կապացուցանենք, որ մեր հայ ժողովուրդն էլ ունի պանծալի զավակներ։ Մենք ցանկանում ենք դառնալ դերասանուհիներ և երազում ենք կերտել անմահ կերպարներ, որոնց պակր պետք է հանդիսանա «Համլեթ»-ը։

«Ողջույն Ձեզ, մեր թանկագին հայրենակիցնե՛ր, դուք շատ եք ձեր հայրենիքի կարոտը քաշել, բայց ոչինչ, հայրենիքը կանչում է ձեզ և վերադառնալով հայրենիք կմոռանաք ամեն մի զրկանք նրա մայրական գրկի մեջ։

«Ցանկանում ենք բարի վերադարձ, հաջողություն և առողջություն։

Ապագա դերասանուհիներ

ՆԻՆԵԼ և ԺԵՆԻԱ»։

«Մենք ծնվել ենք 1929 թվին, Սովետական Հայաստանի մայրաքաղաք Երևանում, 4 տարեկան հասակում հաճախել ենք մանկապարտեզ, որտեղ մնացել ենք 3 տարի, 7 տարեկան հասակից մինչև այժմ սովորում ենք դպրոցում։ Այս տարի հաջողությամբ ավարտելով 8-րդ դասարանը փոխվեցինք 9-րդ դասարան։ Մեզ դաստիարակել և ոգեշնչել է լենինյան-ստալինյան պարտիան, նա մեզ սովորեցրել է սիրել հայրենիքը և հարկավոր դեպքում կյանքը չխնայել նրա համար»։

25 հունիսի 1945

Երևան

***

ԸՆԿ. ԴՈԿՏ. ՏԻՐԱՏՅԱՆԻ ԲԱՆԱԽՈՍՈՒԹՅՈՒՆԸ

Սիրելի՛ հայրենակիցներ.

Հայրենիքի և մեր կառավարության ջերմագին ողջույնները կը բերեմ ձեզի։ Ամենայն Հայոց Նորընտիր Կաթողիկոսի Գևորգ Զ-ի օրհնությունները կբերեմ ձեզի։ Մեծ բանաստեղծներ Ավետիք Իսահակյանի, Դերենիկ Դեմիրճյանի, տաղանդավոր նկարիչ Մարտիրոս Սարյանի, մեծ դերասան Արմեն Արմենյանի և ասոնց եղբայրակից ընկերներու ու ամբողջ հայ ժողովրդի եղբայրական բարևները կբերեմ ձեզի։

Իսլոր պատգամավորներուս առաջին պաշտոնական ընդունելության Գևորգ Արքեպիս. Չեորեքչյան ըրավ իր յոթը տարիներու տեղակալության հաշվետվությունը, որմե տեսանք, թե տեղակալ սրբազանը Հայոց եկեղեցին առաջնորդեր է ճիշտ ուղղությամբ, կանգնելով հայ պետության ու հայ ժողովրդի կողքին և մանավանդ Հայրենական մեծ պատերազմին Հայ եկեղեցին Տեղակալի իմաստուն առաջնորդությամբ իր և հայ ժողովրդի առավելագույն մասնակցությունն է ապահովեր Ս. Միության մղած սոսկալի մարտին, ընդդեմ ֆաշիստ զավթիչներու։ Մենք պատգամավորներս միաբերան տվինք Սրբազան Տեղակալին մեր կատարյալ համաձայնությունը, իր տարած քաղաքականության համար —անվերջ կեցցեներու ու ծափերու տարափին տակ։

Այս նույն վստահությունը արտահայտեցինք մենք ընտրության հանդիսավոր ժամուն, երբ զինքը միաձայնությամբ Ամենայն Հայոց Կաթողիկոս ընտրեցինք իբրև արժանավորագույնը։

Մինչև արցունքները հուզիչ էր տեսարանը, երբ էջմիածնի կամարներուն տակ հայտարարվեցավ ընտրության արդյունքը և երբ 76-ամյա Նորընտիր Կաթողիկոսը հորդառատ արցունքները աչքին, գիրկը նետվեցավ Տանն Կիլիկիո Կաթողիկոս Գարեգին Հովսեփյանի և այս երկու ալեհեր

ծերունիները գրկախառնված մնացին պահ մը։

Հայրենիքի մասին ըսելիքներ շատ ու շատ են, սիրելի հայրենակիցներ։ Մանրամասնություններ դուք պիտի կարդաք «Պահակ»-ի էջերեն։ Այստեղ խիստ հակիրճ պիտի պատմեմ։

Երևանը գտա իբրև բոլորովին նոր, եվրոպական քաղաք մը, լայն ասֆալտե փողոցներով, հսկա մոնումենտալ շենքերով, որոնց շատ շատերը հայկական ճարտարապետության լավագույն գործեր։ Քաղաքը ընդարձակված աներևակայելի չափերով, բովի ավաններեն շատերը արդեն կցված կարելի է համարել անոր, այնպես որ շատ շուտով Մեծ—Երևան մը պիտի ունենանք գեթ միլիոն բնակչությամբ։

Ավելի հետաքրքրական և ուրախալի է, սակայն, մեր հայրենիքին մեջ տիրող ազգային-հոգեկան կյանքը։ Առողջ կուլտուրան, ոչ ագրեսիվ ազգային գաղափարաբանություն մըն է հոն տիրողը։ Գաղութահայության անբովանդակ ազգայնականությունը չկա հոն։ Հայաստան իր համալսարանով, օպերայով, թատրոններով, թանգարաններով և տասնյակ այլ ազգային հաստատություններով կուսումնասիրե, կվերացնե մեր հին ու նոր ազգային արժեքները և իր ապագան կկերտե այդ ազգային արժեքներու վրա։

Ասով պիտի բացատրել նաև մեր ժողովրդի աննման ու հերոսական կեցվածքը Հայրենական պատերազմի չորս տարիներուն։ «Ամեն բան ռազմաճակատի համար» բնաբանը վստահ եմ թե միմիայն Մ. Միության և մեր Հայրենիքին մեջ այնքան արմատորեն գործադրված է։ Մեր ժողովուրդը իր ամբողջական մասնակցությունը բերած է Հայրենական պատերազմին, և ան այսօր հպարտությամբ կհիշե իր գոհաբերության տարիները և կու տա նաև երբեմն հատկանշական մանրամասնություններ։ Այսպես, Լենինականի հյուսվածքեղենի գործարանը Հայրենական պատերազմի չորս տարիներու ընթացքին Կարմիր փոռապանծ Բանակին տված է 84 միլիոն մետր հագուստի կերպաս։ Իսկ Հայաստանի 29 շրջաններեն Ղամարլուի շրջանը բանակին մատակարարած է այդ չորս տարիներուն վեց հազար վագոն մթերք։

Մանրամասնություններու մեջ չեմ ուզեր մտնել։ Հայրենի ժողովրդի վերաբերմունքի մասին դեպի գաղութահայությունը այսքան կուզեմ ըսել, որ այդ վերաբերմունքը եղբայրական է բառիս ամենահարազատ իմաստով։ Հայրենի ժողովուրդը գրկաբաց կսպասե իր դուրսի բոլոր եղբայրներուն։

***

ՖԻԼՄԵՐՈՒ ՑՈՒՑԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ

Բանախոսություններեն վերջ ցուցադրվեցան երկու ֆիլմեր, առաջինը՝ Մայիս մեկի տոնակատարությունները Մոսկվայի մեջ, իսկ երկրորդը՝ 1939 թվին Մոսկվայի մեջ տեղի ունեցած հայկական արվեստի տասնօրյակի երաժշտական և հայկական պարերու հանդիսություններեն քանի մը տեսարան, ուր գեղեցկորեն պատկերացված են «Կոմիտաս» քառյակը, «Ալմաստ» օպերայեն քանի մը տեսարան ու Երևանի Ֆիլարմոնիայի պարի անսամպլեի խմբական պարերը։

***

ՊԱՏՎԻՐԱԿՈՒԹՅԱՆ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՌՈՄԱՆ ՄԱՄՈՒԼԻՆ

Ռոման— սովետ բարեկամության «Առլուս» միությունը, ցանկանալով ռոման հասարակությունը ևս ծանոթացնել կաթող. ընտրությանց առթիվ գումարված եկեղեցական ժողովի աշխատանքներուն, ինչպես նաև Սովետական Հայաստանի ծաղկյալ կացության, իր հոյակապ պալատին մեջ Չորեքշաբթի հուլիսի 11-ին սարքած էր մամուլի կոնֆերանս մը, ուր ի ներկայության ռոման բոլոր թերթերու ներկայացուցիչներուն մեր պատվիրակներն ու այցելուները տվին շահեկան տեղեկություններ, որոնք հուլիս 12-ին ընդարձակորեն լույս տեսան ռոմանական բոլոր թերթերու մեջ։

Կոնֆերանսեն վերջ «Հայաստանյան ճաշկաս»-ի բաժակ մը գինիով հյուրասիրվեցան ներկաները, որոնք իրարու հետ մտերմիկ խոսակցություններով շարունակեցին մտքերու փոխանակումները.

«Առլուս»-ի նախագահ պր. պրոֆ. Փարհոն և ներկա ռոման լրագրողները մեծ հետաքրքրությամբ և գոհունակությամբ ունկնդրեցին մեր պատվիրակները, հիացմունք հայտնելով Սովետական Հայաստանի բացառիկ հաջողություններու վերաբերմամբ։

(«Պահակ» հուլիս 15, թիվ 15—16)։